նակ ծածկում է գետնի տակ եւ յետոյ յայտնում: Իրօք որ «երկրաթաղ» է:

Թրակիական Զալմոքսին յարակից են թւում հայ Արան եւ նրա նախօրինակ էրը:

Հերոդոտի վկայութեամբ Թրակիայում սովորութիւն կար հարուստ մարդկանց մարմինը մեռնելուց յետոյ երեք օր պահել, որի ընթացքում կենդանիներ էին զոհում, լաց ու կոծ անում եւ թաղումը վերջացնում մեծ խնճոյքով: Ատիս-Ադոնիսեան թաղման ծէսերը եւս երեք օր էին տեւում, որին հետեւում էր յարութիւնը: Երեքօրեայ հանդէսները թւում է թէ մի մանրանկար են Զալմոքսի երեքամեայ չքացման:

Պարսիկների մօտ եւս ընդունուած էր մեռելին երեք օր պահել (Cumont Mitra I էջ 32), որովհետեւ հոգին երեք օր իրը թէ մնում է անշնչացած մարմնի մօտ:

Քրմական մեկնութիւն է, անշուշտ: Իսկական հիմը հոգին որոշ ժամանակ հանդիստ տալու սովորութիւն է: Մեռելին երեք օր անթաղ պահելու աւանդութիւնը ներշնչուած է այն հաւատով, որ նա կարող է վերստին կենդանանալ:

Նոյն կարգի երեւոյթներ են եւ էրի կամ Արայի յարութիւնը: Մամիկոնեան կարիճ զօրականի վերակենդանանալու յոյսը նոյն հին հաւատալիքի արձագանգ է:

Պլուտարքին վերագրուած, հաւանօրէն անվաւեր մի գրութեան մէջ Կլէոմբրոտ խօսակիցը պատմում է, որ իր ճանապարհորդութեան ժամանակ արեւելեան երկիրներում լսել է մի զարմանալի անձի մասին, որ տարին մի անգամ էր երեւում մարդկանց, մնացեալ ժամանակն անցնում էր դեւերի եւ աւէրժահարների հետ, եւ այսպիսով օժտւում էր հրաշալի ձիրքերով. (De detectu Oraculorum, 21):

Այս օտարոտի ճգնաւորը ըստ Կլէոմբրոտի ապրում էր թէեւ Կարմիր Ծովի ափերին, բայց երեւում է, որ այլ բան չէ, եթէ ոչ արեւելքում գոյութիւն ունեցող յայտնի հաւատալիքի արտայայտութիւն:

Հայ հաւատալիքների կամուրջը Թրակիայի հետ ակներեւ է: Այս կարեւոր հանգամանքը կարող է անսպասելի լոյս սփռել էր եւ Արա անունների վրայ, որոնց ծագումը թաղուած է խորհրդաւոր մթութեան մէջ:

Իրանական քաղաքակրթութիւնը այնպիսի ծանր ստուեր է ձգած հայ անցեալի վրայ, որ ամէն մի հարցի առթիւ պարտաւոր ենք ամենից առաջ հաշուի առնել Իրանի հնարաւոր ազդեցութիւնը: Հայոց հին անձնական անունները սակաւ բացառութեամբ իրանական դրոշմ են կրում: Արդեօք Արան եւս իրանական փոխառութիւն չէ՞. նման Վարդան, Տիգրան, Երուանդ, եւ այլ բազմաթիւ անունների:

Աւեստայում, Իրանի սրբազան գրքում, պատահում է արդարեւ Արա անունը Ara. (It, 13, 10): Սա մի սոսկ հաւատացեալի անուն է:

Ցայտնի իրանագէտ Բարթոլոմէ, հեղինակ նշանաւոր բառգրքի Արա համարում է կրճատ կամ փաղաքշական ձեւը Aramatay բառի, որ է Arem+matey բարեմիտ, կամ լաւ մտածող: Նոյն բառը Armatay ձեւով ստանում է ի միջի այլոց երկրի նշանակութիւն, ինչպէս եւ երկրի աստուածութեան:

Հայ Սանդ-արամետ, դարձեալ իրանական է, պահել է նոյն Armatay-ի պահլաւ կամ պարթեւական ձեւը Aramet Սանդարամետի այլ եւ աւելի հին ձեւն է Սպանդարամետ, որ նշանակում է «Սուրբ Երկիր» եւ «Երկրի Ոգի» միանգամայն:

Նշանակալից է, որ Մակաբաբեցւոց գրքում Բ. 6, 7 յունարէն բնագրի Դիոնիս(ոս) թարգմանուած է հայերէն Սպանդարամետ:

Ցայտնի է, որ Դիոնիսը Արիատնէի նկատմամբ նոյնն է, ինչ որ Ատիսը Կիբէլի եւ Ադոնիսը՝ Աստարտէի: Հետեւապէս Դիոնիս-Սպանդարամետը մօտենում է իր էութեամբ հայ Արային մեր ըմբռնումով, այսինքն՝ իբրեւ երկրին կապակից աստուածութիւն: Եթէ ճշմարիտ է Բարթոլոմէի ստուգաբանութիւնը, իսկ նա մի հեղինակութիւն է իրանագիտութեան մէջ, որ մեծ կշիռ ունի, ապա ուրեմն, Արա-ն ոչ միայն պաշտամանական բովանդակութեամբ, այլ եւ լեզուական տեսակէտով, իրը բառ, նոյնանում է իրօք (Սպանդ)-Արամետի հետ, որպէս նրա կրճատ ձեւը:

Բարթոլոմէի ստուգաբանութեան օգտին է խօսում եւ Զոնդարա, որ Կապպատովկիական ձեւն է նոյն Spentarmat-ի եւ սրա նման 12-րդ ամսի անուն է. (Կապպատովկ. ամիսների մասին տես Bentey Th. und Moritz,